



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Ս

ՏԱՐԵ՛Ք ԶԻՍ...

Անապատին խորը, ավազին վրա, խար-
խուլ մի տնակի մեջ, սիրտ մը տարադիր
հայու, խորշակեն արևահար, անկողին գամ-
ված կտքաւ խորճիթին նման՝ մարմինը
վտիտ, կտրծքն է հյուծած: Հայ մարտիրո-
սութենէ հրաշքով փրկված՝ օտար երկիրքի
տակ: Սիրտն է աշուն, հոգին ձմեռ, թշուառ
էակ: Պանդուխտ, կերեակայի հայրենի տե-
սարանները, լճակ ու աղբյուրներ, զեփուտը
դարնան մեղմ, փառքը երեկի, վերելք այսօր-
վան: Աշուղի շունչով, վարդապետի կերպ
երգ սիրանվագ, երգ Հայրենիքի, ուր մարդոց
հոգին թէ առած վթռչի անհունը:

Մի օր դացի ես այցի. անկողինը պատը-
տուն, կանթեղը պլպլուն, ո՛չ ջուր, ո՛չ կրակ,
օրհացի վարտո, թշվառութեան մարմնա-
ցում...

20-րդ դարու մարդկային արդարութիւն...
Փոսացած աչքերուն մեջ բուռն վրեժի և բո-
ղոքի սանձված շանթ մահահրկու:

Դալով շրթներ դողդոջուն մկմկուման...

«Բնութիւնն իմ մայր երկրի ինչքան անուշ
է, հույս ծաղիկ պեսպես, աստղերը զվարթ,
ա՛խ, հոս շիրիմ է, շիրիմ, արեւը ստվեր,
սիրտերը մեռել, ծիծաղները սուգ: Տարե՛ք

զիս, տարե՛ք իմ երկրի դոգ»։ Վշտահար
սրտի քաղձանքն է այդ լուկ. սա խուլ ան-
կունին մեջ լքված, արհամարհված, ու ցա-
սում, բողոք ու ձայն խեղդված:

Տարե՛ք, հոն տարե՛ք, ուր հեծեծող սիր-
տերուն վշտակցող կա, արդարութեան ձայնը
կհնչէ ու աստվածային հոգին կթաղաւորն,
կըսեմ: Մութաղբ և ձայնդ սրտաբուխ, տե՛րը
լսած է արդեն իմ թշուառ ազգակիցս:

Մայր Աթոռի հսկան, աստվածային օրհ-
նեբո, երգեց պատարագումը հայ ցեղին,
այժմ շեփորներ մարտի, երգիւր ռազմական,
վեհափառ հարութեանը հաղթական Հայրե-
նիքիդ:

Սրբերգակ զանգ, դարավոր Մայր Տաճա-
րին հաղկական, փանշո է ավետիս ազգահա-
վաքումի Ավետյաց երկիր, Սրբութեան հարկ
առաջնորդդ:

Աղամանդյա երազներու իրականացում...
Մեռնիմ քու դաշն դողանջին հայրական:

Արաբ-Բունար

ՍԱՐԳԻՍ Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

(Ֆիլադելֆիա, «Նոր-Մայրիա»,
1954 թ., № 4)

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԵՆ ՇԱՀԵԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՒՏԱ ՀՈԳԵՇՆՈՐՀ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԲՐԱՀԱՄՅԱՆ

Ինչպես ծանոթ է մեր սիրելի ընթերցող-
ներուն, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ.
Ամենայն Հայոց երանաշնորհ Վեհափառ
Կաթողիկոսի թաղման տխուր առիթով, Երու-
սաղեմէն Հայաստան մեկնած էին Երուսա-
ղեմի Ս. Հակոբա միաբաններէն հոգեշնորհ

Տ. Հայկազուն վարդապետ Աբրահամյան և
հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ասլան-
յան, որոնք մոտ ամիս մը Հայաստան մտա-
լի հետո վերադարձան Երուսաղեմ:

Այս առիթն օգտվելով, որպէս «Կոռնիկ»
մանսավոր թղթակից, տեսակցութիւն մը

խնդրեցի հոգեշնորհ Տ. Հայկազուն վարդապետ Արարհամյանին: Հայր սուրբը, պատասխանելով հարցումներու, հետևյալ տեղեկությունները տվավ «Կոռնիկ»ի մեջ հրատարակվելու համար*:

— Հայաստանի մայրաքաղաք Երևանի մեջ կան երեք եկեղեցիներ— Ս. Սարգիս, Ս. Հովհաննես և Ս. Զորավար: Յուրաքանչյուր եկեղեցի ունի հինգ քահանաներ և երկսեռ հոգաբարձություններ, որոնք կաշխատին եկեղեցիին բարեկարգության համար: Այս եկեղեցիները միշտ լեցուն են հավատացյալներով: Ես բախտն ունեցա կիրակի մը պատարագ մատուցանելու Ս. Զորավար եկեղեցիին մեջ, ուր աներկա էին ավելի քան հազար հոգի: Հակառակ անոր, որ բարեպաշտ ժողովուրդը լուր չունի, թե այդ օրվան պատարագիչը վարդապետ մըն է և արտասահմանեն եկած, բայց և այնպես հավատացյալներ խոռոնեում փութացած էին եկեղեցի: Նույն օրը, իմ ձեռամբ մոտավորապես 600 հոգի հաղորդություն առին:

Երևանի մեջ ոչ մեկ այլ եկեղեցի կամ պաշտամունքի վայր կա բացի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիներեն, և ոչ ալ մզկիթ: Նախապես գոյություն ունեցող երկու մզկիթները թանգարանի վերածված են:

— Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը ունի 18 ժառանգավոր սաներ և 9 սարկավազներ, որոնցմե երեքը այս տարի կավարտեն Մոսկվայի աստվածաբանական համալսարանը և մոտ օրեն հոգևորական պիտի ձեռնադրվին: Հոգևոր Ճեմարանը ունի երեք տասնամյա դասընթացներ, որոնցմե երկուքը ավարտել են հետո, հաջողակ ուսանողները կղրկվին Մոսկվա, իրենց ուսումը կատարելագործելու համար: Հոգևոր Ճեմարանը ունի զորավոր ուսուցչական կազմ մը բաղմահմուտ ուսուցիչներով, ինչպես պրոֆ. Արարհամյան, և տնօրենն է պարոն Մ. Մինասյան:

— Հոգևոր Ճեմարանին մեջ կդասավանդվին նաև կրոնական և պատմական նյութեր:

— Էջմիածինն ունի հարյուր հոգինոց դպրաց դաս մը: Դպիրները ամեն կիրակի Երևանեն Էջմիածին կուգան ու կերգեն Եկմայան եղանակով: Չմոռնամ հոս հիշելու, որ սկսած են Էջմիածնի Տաճարի նորոգությունները, որոնց ծախսը Հայաստանի կառավարության կողմից կհոգացվի մասնավորապես այդ նպատակով տրամադրված բյուջեով մը:

— Երևանը իր ներկա դիրքով և շենքերու գեղեցկությամբ կգերազանցե որևէ երկրի քաղաքները: Կառույցներուն մեջ կտիրեն

հայկական ճարտարապետական ոճը: Երևանը ունի 40—50 մետր լայնությամբ պողոտաներ, ասֆալտապատ, որոնց երկու եզերքը համաշափ ծառերու շարան մը կա, էլեկտրական լույսերու առատությամբ ողողված, որոնք կգերազանցեն բոլոր ինձ ծանոթ քաղաքներու պողոտաները: Իբրև մեծ քաղաք՝ տեսած եմ Մոսկվա, Վիեննա, Կիև, Խարկով և այլն, բայց Երևանը տարբեր է բոլորին...

— Երևանի դպրոցական թաղամասը նման է հոծ բազմություն ունեցող քաղաքի մը, ուր կրնակի համալսարանական երկսեռ ուսանողությունը: Միջին և ճուլհիսկ ամենափոքր դպրոցներու աշակերտներուն դեմքին վրա կփայլի ուսման տենչը: Երևանի դպրոցներուն մեջ կդասավանդվի դասական և նոր հայերենն՝ զատ՝ ռուսերեն, անգլիերեն, ընդհանրապես, և ուսանց մեջ նաև ֆրանսերեն, և գիտության այն բոլոր ճյուղերը, որոնք բարձրագույն և երկրորդական վարժարաններու մեջ կուսուցվին:

— Երևան քաղաքի շենքերը, ամենքն ալ, առանց բացառության, հայկական նշանավոր առօրյա քարով շինված են և բազմահարկ են— ոչ ավելի քան վեց հարկ, որպեսզի ամենն վարի հարկն անգամ չզրկվի արևի առողջարար ճառագայթներէն: Ականատեսներ կվկայեն, թե Երևան, իր տարածությամբ, երկուք ու կես անգամ ավելի մեծ է քան Բեյրութ քաղաքը:

— Հայաստանի խմելու ջուրը նշանավոր է իր թեթևությամբ և լավորակությամբ, իսկ օդը՝ առողջարար:

— Երևանի ներկա բնակչությունն է ավելի քան 450.000:

— Հայաստանի գործարանները կգտնվին մեծ մասամբ Երևանի շրջակայքը: Մուխ արտադրող գործարանները հաստատված են քաղաքի հարավային մասին մեջ: Անոնցմե նշանավոր է Կաուչուկի (ձգախեժ—«Շուպրե») գործարանը: Իսկ գործարաններեն շատերը հաստատված են քաղաքի ծայրամասին մեջ— ինչպես կոնյակի և գինիի գործարանները: Անոնցմե ամեն մեկը քաղաքի մը տեսք կցուցադրեն:

Երևան քաղաքը ունի վեց զբոսայգի (հանրային պարտեզ—պարկ), խիտ ծառատաններով, և ամենք ունին ժողովուրդի հանգստության համար ամեն դյուրություններ, ինչպես նստարան, աթոռ, սեղան, բարձրախոս, ձայնընդունարան և այլն: Ես ամենամեծ տեսա հայ բանվորներու հոծ բազմություն մը այս զբոսայգիներեն մեկուս մեջ: Անոնցմե ամեն մեկը նստած կպարապեր գրքի և կամ թերթի մը ընթերցանությամբ, մեղմ զեփյուտին և դասական երաժշտության եղանակներուն տակ:

* Տեղի խնայողության համար զանց կրնենք հարցումներ և կհրատարակենք միայն պատասխանները:— Խմբ. «Կոռնիկ»:

ներեանի մեջ ա՛լ ավելի սքանչացալ ի տես իստորոններու, որոնցմէ նշանավորներն են Մունդուկյանը և Ալեքսանդր Սպենդիարյանը: Այս վերջնուն մեջ ես վայելեցի բեմադրութիւնը «Դավիթ-Քեկ»-ի և ալ ազգային իստորեղութիւնաց: Ամենն հոյակապն է երեանի Ֆիլհարմոնիայի սրահը, որուն շինութիւնը միայն տարի մը առաջ ավարտեցաւ:

— Տեսա բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, բանաստեղծ Սողոմոն Տարոնցին, որ մի քանի պատեհ առիթներով արտասանեց իր հոյակապ քերթվածներն մի քանի հատ: Այո՛, տեսանք և խոսեցանք Ս. Տարոնցիին և այլ համարավոր հայ գրական մշակներու հետ, Վարպետ Ա. Իսահակյանի տան մեջ: Անոնք ամենքն ալ կաշխատին բարձր պահել հայ մշակութիւն մակարդակը:

— Հայաստանի մեջ մեր արեւակիցները ուրախ են, որովհետեւ իրենց աշխատանքով ապահոված են իրենց ներկան և պայծառ ապագան: Անոնք իրենց մանուկներուն կըրթութիւն մտահոգութիւնն իսկ չունին, որովհետեւ պետական հիմնարկներու մեջ անոնց կըամբլի հայեցի դաստիարակութիւն:

Մեր վերջին հարցումին, թե «Հայր սուրբ, դուք ուղղակի ի՞նչ տպավորութիւն կրեցիք

Հայաստանին», հայր Հայկազուն պատասխանեց.

— Ես ուղղակի հիացա Հայաստանի ժողովուրդին շինարարական և կրթական ջանքերուն ու կրոնական բարեպաշտութիւն վրա: Այս վերջինը, մանավանդ, առավելապէս գերազանց է քան արտասահմանի բոլոր զաղութներուն: Գիտե՞ս, Արմեն, Հայաստանի մեջ մեր ծախքերը ամբողջութեամբ հոգաց էջմիածինը և անոր ամբողջ հասույթը կ'ոչանա մոմավաճառութիւնով: Ես լսածս չէ որ կ'աւտմեմ, այլ տեսածս:

— Վեհափառի թաղման օրը ես կանուխն իջալ էջմիածնա Տաճարը, ներկա ըլլալու առավոտյան ժամերգութիւն: Հոն տեսա հոծ բազմութիւն մը հավատացյալներու, որոնք երկու ժամվան մեջ կ'ես պարկ մոմ գնած էին ու վտռած: Ահա՛ էջմիածնի հասույթի միջոցը:

Հայկազուն վարդապետ կ'պատրաստով դարձյալ երթալու Հայաստան: Ան, այս անգամ, պիտի ընկերանա Տեղակալ բարձրապատիվ Տ. Նոյիշ արքեպիսկոպոս Տերտերյանի, երբ ան կ'երթա անցնելու իր պաշտօնին գլուխը:

ԱՐՄԵՆ ԱՍՏՈՒՐՅԱՆ

(Նյու-Յորք, «Նիւ Ռիթ» շաբաթաթերթ, 20 օգոստոսի 1954 թ., № 48/1816)

ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՅՑԵԼԵՆ

Ֆրանկո-Սովետ մշակութային կապի նախաձեռնութեամբ անցյալները 40 հոգինոց պատվիրակութիւն մը այցելեց Սովետական երկիրները: Այդ պատվիրակութիւնը կազմւած էր բացառաբար երիտասարդ ուսանողներ և ուսանողուհիներ, որոնք իրենց ամառային արձակուրդը այս կերպով անցուցին:

Այս բախտավոր այցելուներու խումբին մեջ կ'առնվին երեք հայեր ալ, որոնցմէ մին՝ օրիորդ մը: Ասոնք մաս կ'կազմեն Ֆրանսահայ մշակութային երիտասարդաց միութեան (ԺԱՅ), որ գաղութի մեջ ճանչցւած է որպէս Հայաստանյան ճակատի առաջապահ ընկերակցութիւնը:

Այցելուներու խումբը չորս օր Մոսկվա կ'մնա, չորս օր Լենինգրադ, որմէ վերջ գանազան խումբերու կ'ըմբռնին և տարբեր ուղղութեամբ կ'մեկնին, մաս մը Ուրալ, մաս մը՝ Ստալինգրադ և այլն: Մեր երիտասարդներն ալ կ'մեկնին Հայաստան, ուր քանի մը օր կ'ենալն վերջ կ'վերադառնան Մոսկվա, ուր ժամադրված կ'ըլլան բոլորը, Ֆրանսա վերադառնալու համար:

Ահա այդ ճամբորդութեան տպավորութիւնները մեզի ներկայացնելու համար անցյալ շաբաթ իրիկուն, սեպտեմբեր 25-ին ԺԱՅ-ի սրահներուն մեջ տեղի ունեցավ հրապարակային ժողով, որուն փութացեր էր ներկա ըլլալու խոսնակամ բազմութիւն մը:

Այցելուներն Պ. Խաչիաշյան ընդարձակ տեղեկութիւններ տվալ Հայաստանի ընկերային սարքովարդին, տնտեսական պայմաններուն, իրավական վիճակի մասին, որ միևնույն են, ինչ որ Սովետական Միութեան բոլոր երկիրներուն մեջ: Ծատ հետաքրքրական կերպով և մանրամասնորեն տվալ գործարաններու և արհեստանոցներու ներքին կյանքը, առողջապահական պայմանները, հոն աշխատող բանվորներուն աշխատավարձին սակը, հալելալ ժամերուն կամ արտադրանքին վճարը և այլն, որ չափազանց շահեկան էին և ունկնդրվեցալ մեծ ուշադրութեամբ:

Երկրորդ բանախոսն էր շատ շնորհալի ուսանողուհի մը՝ օրիորդ Նազիկ Մելիք-Մինասյան, որ քույրն է բանաստեղծ Ռուբին